Կ Ա Ր Ծ Ի Ք

ՄՀԵՐ ՄԵՐՈՒԺԱՆԻ ՕԹԱՐՅԱՆԻ <<ՏԵՂԱԿԱՆ ԻՆՔՆԱԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐԸ ԵՎ ԴՐԱՆՑ ԼՈՒԾՄԱՆ ՈՒՂԻՆԵՐԸ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ>> ԹԵՄԱՅՈՎ ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ, ՆԵՐԿԱՅԱՑՎԱԾ Ը.00.02 <<ՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ, ՆՐԱ ՈԼՈՐՏՆԵՐԻ ՏՆՏԵՍԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԿԱՌԱՎԱՐՈՒՄ>> ՄԱՍՆԱԳԻՏՈՒԹՅԱՄԲ ՏՆՏԵՍԱԳԻՏՈՒԹՅԱՆ ԹԵԿՆԱԾՈՒԻ ԳԻՏԱԿԱՆ ԱՍՏԻՃԱՆԻ ՀԱՅՑՄԱՆ ՀԱՄԱՐ

Ժամանակակից ժողովրդավարական պետության կարևոր բաղկացուցիչներից մեկն է հանդիսանում տեղական ինքնակառավարման արդյունավետ համակարգը, որը կոչված է նպաստելու տեղական մակարդակում բնակչության և համայնքի առջև ծառացած տեղական նշանակության տարբեր բնույթի խնդիրների լուծմանը: Ըստ էության, տարածքային զարգացման քաղաքականությունը պետք է հիմնված լինի այն տրամաբանության վրա, ըստ որի տեղական նշանակության խնդիրների լուծումը աստիճանաբար պետք է մոտեցնել տեղի բնակչությանը, ելնելով, իհարկե, համայնքի հնարավորություններից, իսկ տարածաշրջանային զարգացման հիմնահարցերի լուծումը՝ դնել տարածքային կառավարման մարմինների վրա:

Տեղական ինքնակառավարման բնագավառում նախորդ ժամանակաշրջանում կուտակված փորձը ցույց տվեց, որ հանրապետությունում դեռևս առկա են բազմաթիվ, երբեմն նաև իրարամերժ, հիմնախնդիրներ, որոնց հրատապ լուծման դեպքում միայն կարելի է ակնկալել ցանկալի արդյունքներ տարածքային զարգացման գործում: Մասնավորապես, դեռևս լրիվ չեն կանոնակարգված պետական կառավարման տարածքային և տեղական ինքնակառավարման մարմինների փոխհարաբերությունները, ձևական բնույթ են կրում պետական բյուջեից համայնքներին հատկացվող դոտացիաները, չեն բացահայտված տեղական տուրքերի և վճարների բոլոր աղբյուրները և այլն:

Նշված խնդիրների և դրանց լուծման ուղիների բացահայտմանն է նվիրված աշխատանքը, որով էլ պայմանավորված է դրա ***իրատապությունն ու արդիականությունը:***

Ատենախոսության ***կառուցվածքը*** հնարավորություն է ընձեռել բացահայտել հետազոտվող հիմնահարցի բնութագրական կողմերը, ապահովել դրանցով պայմանավորված խնդիրների լուծման հաջորդականությունը, պահպանել առաջարկված մոտեցումների գործնական նշանակության հիմնավորմանը և ամբողջական հետազոտության իրականացմանը հատուկ այլ սկզբունքները:

Աշխատանքի ներածական մասում դրված է հետազոտության նպատակը և տրված են դրան հասնելու համար լուծման ենթակա խնդիրները, Այստեղ բնութագրված են տեսական ու մեթոդական այն հիմքերը, որոնց վրա կառուցված են հեղինակի մշակումներն ու եզրահանգումները:

Ատենախոսության ***առաջին՝ «Տեղական ինքնակառավարման համակարգի ձևավորման տեսական և մեթոդական հիմքերը» գլխում*** ուսումնասիրվել են տեղական ինքնակառավարման նպատակները և առանձնահատկությունները, ներկայացվել են տարածքային կառավարման և տեղական ինքնակառավարման մարմինների փոխհարաբերությունները և գնահատվել է տարածքային համաչափ զարգացման նշանակությանը:

Հետազոտության ***երկրորդ՝ «Տեղական ինքնակառավարումը Հայաստանի Հանրապետությունում և դրա զարգացման հիմնախնդիրները» գլխում*** ուսումնասիրվել և վերլուծվել են Հայաստանի վարչատարածքային բաժանման համակարգի փոփոխությունները շուկայական հարաբերությունների ձևավորման անցած ժամանակահատվածում, համայնքների խոշորացման գործընթացը և դրա ազդեցությունը տեղական ինքնակառավարման համակարգի

արդյունավետության բարձրացման վրա, ինչպես նաև համայնքների ֆինանսական հնարավորությունների ընդլայնման հիմնախնդիրները:

Աշխատանքի ***երրորդ՝ «Տեղական ինքնակառավարման համակարգի արդյունավետության բարձրացման ուղիները Հայաստանի Հանրապետությունում» գլխում*** մշակվել են տեղական ինքնակառավարման համակարգի զարգացման հիմնական ուղղությունները և միջբյուջետային հարաբերությունների կատարելագործման, մոտեցումները:

Հետազոտության արդյունքների ***հավաստիությունը*** պայմանավորված է այն հանգամանքով, որ աշխատանքում մշակված մոտեցումները և արված առաջարկությունները հիմնված են քննարկվող հիմնահարցը ուսումնասիրող հայտնի մասնագետների աշխատությունների վրա, իսկ որպես տեղեկատվական հիմք ծառայել են այդ բնագավառին վերաբերող պաշտոնական և վիճակագրական նյութերն ու տվյալները: Ատենախոսությունում օգտագործված են վերլուծության ժամանակակից մեթոդներ, որոնք, ակնհայտորեն, բարձրացրել են ստացված արդյունքների հավաստիության աստիճանը:

Աշխատության ***գիտական նորույթը*** կայանում է նրանում, որ ներկայացվել են տեղական բյուջեների ֆինանսական հնարավորությունների ընդլայնմանն ուղղված առաջարկություններ, մշակվել են բյուջետային միջոցների ռացիոնալ օգտագործման, միջբյուջետային հարաբերությունների կարգավորման, ավագանու ինստիտուտի կայացման նոր մոտեցումներ, ինչպես նաև վիճակագրական և տնտեսաչափական գործիքակազմի կիրառմամբ առաջարկվել է տեղական բյուջեների եկամուտների համալրմանն
ուղղված հետազոտությունների իրականացման մեթոդական մոտեցում:

Հեղինակի կողմից մշակված մեթոդաբանական ու մեթոդական մոտեցումներն, արված առաջարկություններն ու ընդհանրացումներն ունեն ***տեսական և գործնական*** նշանակություն: Դրանք կարող են լայնորեն

օգտագործվել հանրապետությունում տարածքային զարգացմանն ուղղված ծրագրերի մշակման ընթացքում: Հետազոտության արդյունքների գիտագործնական կիրառության շրջանակները բավականին լայն են և ուշադրության արժանի:

Ատենախոսությունը զերծ չէ ***դիտողություններից***, որոնցից հատկանշական են հետևյալները.

1. Տեղական ինքնակառավարման համակարգի ֆինանսական ապահովվածության մակարդակի բարձրացման հիմնախնդրի լուծումը, ակնհայտորեն, ենթադրում է ծրագրային մոտեցում: Այս առումով, կարծում ենք, որ համայնքներում բյուջետային գործընթացի կատարելագործման հարցերի քննարկումը համայնքների զարգացման ծրագրերի տեսանկյունից կնպաստեր բյուջետային գործընթացի կատարելագործման առավել ամբողջական մոտեցումների մշակմանը:
2. Պետական կառավարման և տեղական ինքնակառավարման համակարգերի արդյունավետ գործունեության հիմնական նախապայմաններից մեկը, ինչպես իրավացիորեն նշում է հեղինակը, ապակենտրոնացումն է և լիազորությունների հստակ տարանջատումը: Մեր կարծիքով, դրանց արդյունավետ տարանջատման հարցերը անհրաժեշտ է դիտարկել պետական կառավարման համակարգի վերափոխումների շրջանակներում: Աշխատանքում նշված հարցի վերաբերյալ հեղինակի ուսումնասիրությունները, մեր կարծիքով, կրում են մակերեսային բնույթ:
3. Տեղական ինքնակառավարման մարմինների գործունեության արդյունավետության բարձրացման համար հեղինակի կողմից առաջարկվում է ավելացնել համայնքների եկամուտների աղբյուրները: Այս համատեքստում հեղինակի կողմից առաջ է քաշում հարկային ապակենտրոնացման հարցը՝ տեղական ինքնակառավարման մարմիններին վերապահելով որոշակի իրավասություններ հարկային քաղաքականության ոլորտում: Կարծում ենք, որ զարգացման ներկա

փուլում նման քայլը կարող է լուրջ հիմնախնդիրներ առաջացնել պետական եկամուտների հավաքագրման առումով՝ հաշվի առնելով տեղական ինքնակառավարման մարմինների ներուժը նման խոշորամսշտաբ խնդրի լուծման համար:

4. Ատենախոսությունում իրականացված վերլուծությունների արդյունքում ֆինանսական կառուցակարգերի կատարելագործման համար հեղինակն առաջարկում է իրականացնել մի շարք հարկատեսակներից մասհանումներ տեղական բյուջեներին: Կարծում ենք, նման քայլի արդյունավետությունը պետք է դիտարկվեր հանրապետությունում առկա տարածքային ոչ համաչափ զարգացման համատեքստում: Բացի այդ, նման առաջարկությունը պետք է զուգակցվեր պետական բյուջեի եկամուտների կորստի գնահատականով, որը կառաջանա մասհանումների դեպքում: Աշխատանքում այդ ուղղությամբ ուսումնասիրությունները բացակայում են:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

Արված դիտողությունները չեն նսեմացնում հետազոտության արդյունքները: Դրանք հետապնդում են տեղական ինքնակառավարման համակարգի զարգացման հիմնահարցերին նվիրված հետագա ուսումնասիրությունների ուղղությունների բացահայտման նպատակ:

Մ. Օթարյանի թեկնածուական ատենախոսությունն իրենից ներկայացնում է ինքնուրույն, ամբողջական և արժեքավոր հետազոտություն, որում դրված և լուծված են հանրապետության համար կարևոր ու արդիական խնդիրներ:

Հեղինակի մասնագիտական ու վերլուծական մակարդակն, ակնհայտորեն, բարձր է, ինչի մասին են վկայում ինչպես ատենախոսությունը, այնպես էլ դրանում ստացված արդյունքները: Աշխատանքում մշակված առաջարկությունները և կատարված

եզրահանգումները կարող են լայնորեն օգտագործվել տեղական ինքնակառավարման համակարգի զարգացման ծրագրերի իրականացման ընթացքում:

Հետազոտության հիմնական արդյունքները հրապարակված են: Ատենախոսության սեղմագիրը համապատասխանում է ուսումնասիրության բովանդակությանը և արտացոլում աշխատանքի կարևորագույն դրույթներն ու արդյունքները:

Ընդհանուր առմամբ, Մ. Օթարյանի «Տեղական ինքնակառավարման համակարգի զարգացման հիմնախնդիրները և դրանց լուծման ուղիները Հայաստանի Հանրապետությունում» թեմայով ատենախոսությունը համապատասխանում է «Հայաստանի Հանրապետության գիտական աստիճանաշնորհման կանոնակարգի» 6-րդ և 7-րդ կետերի, ինչպես նաև թեկնածուական ատենախոսություններին ներկայացվող պահանջներին, իսկ դրա հեղինակն արժանի է Ը.00.02 «Տնտեսության, նրա ոլորտների տնտեսագիտություն և կառավարում» մասնագիտությամբ տնտեսագիտության թեկնածուի գիտական աստիճանի շնորհմանը:

ՊԱՇՏՈՆԱԿԱՆ ԸՆԴԴԻՄԱԽՈՍ«
տնտեսագիտության դոկտոր, պրոֆեսոր **Վ. ԲՈՍՏԱՆՋՅԱՆ**
17.10.2024թ.

Պարոն Վ. ԲՈՍՏԱՆՋՅԱՆԻ
ստորագրությունը հաստատում եմ՝
Բ. գ. թ.
ԵՊՀ գիտական քարտուղար **Մ. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ**

17.10.2024թ.